ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ ԴԵՆԻԿԻՆԻ ԴԵՄ ՄՂՎԱԾ ՊԱՅՔԱՐՈՒՄ (1919—1920 թթ.)

ՄԱՌԼԵՆ ԲՈՐՅԱՆ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի գործում հսկայական էր բանակի դերը։ Սակայն բանակի միապետական հրամանատարության ղեկավարի մասը չճանաչեց բանվորա-գյուղացիական կառավարությանը և Բրեստի պայմանագրի կնքումից հետո, Անտանտի երկրների օգնությամբ, ակտիվ պայքար սկսեց սովետական իշխանության դեմ։

1918 թ. Հյուսիսային Կովկասի և Դոնի հակասովետական ուժերը համախմբվեցին ցարական գեներալ Դենիկինի հրամանատարության ներքո։ Ստեղծվեց այսպես կոչված «կամավորական բանակ», որը զինվեց և հանդերձավորվեց անգլիական իմպերիալիզմի կողմից։ Հակահեղափոխական մյուս գեներալների նման Դենիկինը ևս պայքարում էր «միացյալ, անբաժանելի» միապետական Ռուսաստանի համար, ձգտելով տապալել սովետական իշխանությունը, վերականգնել կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը[1]։

Անտանտի երկրների կառավարությունները լիովին հավանություն էին տալիս Դենիկինի պլաններին և ամեն կերպ օգնում դրանց իրականացմանը։

1919 թ. հունիսին Դենիկինի զորքերը գրավեցին ամբողջ Հյուսիսային Կովկասը և ներխուժեցին Դաղստան։ Անդրկովկասի զավթումը Դենիկինի կողմից մոտակա ժամանակների հարց դարձավ և անկասկած կիրագործվեր, եթե նա չջախջախվեր Սովետական Ռուսաստանի կարմիր բանակի կողմից։

1919 թ. հունիսից կարմիր բանակը ծանր, արյունալի մարտեր էր մղում դենիկինյան բանակի դեմ։ Հուլիսի 9-ին կոսակցության Կենտկոմը Վ. Ի. Լենինի հատուկ նամակով դիմեց կուսակցական բոլոր կազմակերպություններին. «Վրա է հասել սոցիալիստական հեղափոխության ամենակրիտիկական մոմենտից մեկը, ամենայն հավանականությամբ՝ նույնիսկ ամենակրիտիկականը...։ Բանվորների և գյուղացիների բոլոր ուժերը, Սովետական հանրապետության բոլոր ուժերը պետք է լարել Դենիկինի արշավանքը ետ մղելու և նրան հաղթելու համար...»[2]։

Կուսակցության Կենտկոմի դիմումը հսկայական նշանակություն ունեցավ նաև Անդրկովկասի բոլշևիկների համար։ Լենինյան վերոհիշյալ պահանջը երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների համար ուղեցույց դարձավ Դենիկինի դեմ մղվող պայքարի կազմակերպման գործում։

Բոլշևիկյան «Волна» թերթը 1919 թ. հունիսի սկզբին գրում էր. «Վերջին օրերին Անդրկովկասում տագնապալի վիճակ է»[3], և այդ վիճակի համար, նշում էր թերթը, մեղավոր են մենշևիկները և մուսավաթականները, որոնք ժամա-

---

[1] «Волна», 14. VI. 1919.

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 535—536։

[3] „Волна", 14.VI.1919.

նակին ոչ միայն չպայքարեցին Դենիկինի դեմ, այլև օգնեցին, որպեսզի նա կռվի Սովետական Ռուսաստանի դեմ։

Հնդհանուր տագնապի այդ օրերին Վրաստանի և Ադրբեջանի կառավարությունները մի շարք ամպագորգոռ ու անորոշ հայտարարություններ արեցին Դենիկինի հասցեին, սակայն ոչ թե նրա դեմ պայքարելու, այլ աշխատավորների աչքին թոզ փչելու նպատակով։ Խոսելով այդ քաղաքականության մասին, «Волна»-ն գրում էր. «Քանի դեռ Անդրկովկասի կառավարությունները չեն հրաժարվի իրենց ներկա՝ Դենիկինին սիրաշահելու և շողոքորթելու քաղաքականությունից, այդ վտանգը մնալու է միանգամայն ռեալ և այն կարող է Անդրկովկասը դարձնել արյունալի միջադեպերի ասպարեզ... Հեղափոխական պատերազմ Դենիկինի դեմ, ահա թե ինչ է պահանջում երկրամասի բազմազգ պրոլետարիատն այսօր»[4]։

Անդրկովկասի համար ստեղծված տագնապալից պահին բոլշևիկյան կազմակերպությունների կոչով երկրամասի բազմազգ աշխատավորներն իրենց բողոքի ձայնը բարձրացրին ընդդեմ Դենիկինի։ Համաժողովրդական այդ պայքարը գլխավորեց պրոլետարական Բաքուն։ 1918 թ. աշնանը, երբ թուրքական օկուպանտները հեռացան Բաքվից, այնտեղ բանվորական շարժումը որոշ չափով աշխուժացավ։ Վերականգնվեցին բոլշևիկյան կազմակերպությունները։ Ստեղծվեց «Բաքվի բանվորական կոնֆերանս» անունը կրող կազմակերպությունը, որն ըստ էության բանվորական սովետ էր, կամ ինչպես Ս. Մ. Կիրովն էր ասում «բանվորական պառլամենտ էր»[5]։ «Բաքվի բանվորական կոնֆերանս»-ը, որը գլխավորում էր բանվորական շարժումը, հոգում էր բանվորների կարիքները, պայքարում նրանց շահերի համար։ Սկզբնական շրջանում այդ կազմակերպության ղեկավարության մեջ զգալի տեղ էին գրավում էսէռները և մենշևիկները, բայց աստիճանաբար ղեկավարությունն անցավ բոլշևիկների ձեռքը։ «Բաքվի բանվորական կոնֆերանս»-ը Դենիկինի դեմ մղվող համաժողովրդական պայքարի կազմակերպման գործում անգնահատելի դեր է կատարել։ Դեռևս 1919 թ. ապրիլին, երբ դենիկինյան վտանգը ռեալ դարձավ Անդրկովկասի համար, բոլշևիկները «Բաքվի բանվորական կոնֆերանսում» առաջարկեցին՝

1. Առանց ազգային տարբերության համախմբվել Բաքվի հեղափոխական պրոլետարիատի շուրջը՝ հակահեղափոխության դեմ պայքարելու համար։

2. Անդրկովկասյան դեմոկրատիայի գործողությունները համաձայնեցնել ռուսական հեղափոխական ուժերի հետ և միասին պայքար մղել միջազգային իմպերիալիզմի դեմ։

3. Եղբայրական ողջույն հղել Հյուսիսային Կովկասի հեղափոխական ուժերին և բողոքել դենիկինյան ռեակցիայի դաժան կամայականությունների դեմ[6]։

Ինչպես երևում է բանաձևից, բոլշևիկները գտնում էին, որ Դենիկինի դեմ հաջողությամբ պայքարելու համար անհրաժեշտ է կապ հաստատել Սովետական Ռուսաստանի հետ, որովհետև առանց կարմիր բանակի օգնության հնարավոր չէր ջախջախել Դենիկինին և նրա թիկունքում կանգնած Անտանտի իմպերիալիստներին։ Արձագանքելով «Բանվորական կոնֆերանսի» կոչին, Բաքվի Բայիլովի-Բիբի-Էյբաթի շրջանի բանվորներն այդ օրերին ընդունած

---

4 Նույն տեղում։

5 «История Азербайджана», т. 3, Баку, 1963, стр. 179.

6 «Заря», 9. IV. 1919.

բանաձևում Ադրբեջանի կառավարությունից և պառլամենտից պահանջում էին անհապաղ պատերազմ հայտարարել Դենիկինին և այդ նպատակով համախմբել բազմազգ աշխատավորներին։ Բացի այդ, նրանք խնդիր էին դնում վճռական միջոցներ ձեռնարկել Ադրբեջանում գտնվող դենիկինյան գործակալների դեմ և թույլ չտալ զենքի և այլ հանդերձանքի առաքումը Դենիկինին ու Կոլչակին[7]։ Սակայն մուսավաթական կառավարությունը Դենիկինի դեմ պայքարելու մտադրություն չուներ և ըստ էության օժանդակում էր դենիկինյան սպաներին, որոնք Ադրբեջանում զինվորներ էին հավաքագրում։

1919 թ. մայիսի 23-ին «Բաքվի բանվորական կոնֆերանսի» նախագահությունն իմանալով, որ «Էկվատոր» նավը զինամթերք է բարձվում Կոլչակին ուղարկելու համար, նավահանգստի բանվորական կոմիտեին հանձնարարեց արգելել զինամթերքի առաքումը[8]։ Սակայն մուսավաթական կառավարությունը շարունակում էր Դենիկինին սիրաշահելու քաղաքականությունը։ Մայիսի 25-ին «Բաքվի բանվորական կոնֆերանսը» նորից դիմեց աշխատավորներին. «Ընկերներ, Բաքվի վրա նորից կախվել են սև ամպերը։ Ադրբեջանի աշխատավորները նորից կանգնած են մահացու վտանգի առջև։ Սովետական Ռուսաստանի կարմիր բանակի կողմից ջախջախված դենիկինյան բանակները շարժվում են դեպի Բաքու, նրանք գրավել են Պետրովսկը և Դերբենտը և ընդհուպ մոտեցել են Ադրբեջանի սահմաններին։ Ոչ ոքի համար այլևս գաղտնիք չէ, թե ինչ է ուզում այդ ցարական գեներալը։ Անդրկովկասի հակահեղափոխական կառավարությունների մեղքով ու թույլտվությամբ դենիկինյան գործակալները վխտում են ողջ երկրամասում։ Նրանք օրը ցերեկով զինվորներ են հավաքագրում Դենիկինի բանակի համար»[9]։ Դիմումում այնուհետև նշվում էր, որ մուսավաթական կառավարությունը վաղուց է կապ պահպանում Դենիկինի հետ։ Այդ փաստը չէին ժխտում նաև մուսավաթական կառավարության ղեկավարները։ 1919 թ. փետրվարի 18-ին արտաքին գործերի մինիստր Խանխոյսկին պառլամենտի նիստում հայտարարեց, որ դենիկինյան բանակի գեներալներ Պրեժևալսկին և Էրդելին կամավորներ են հավաքագրում Բաքվում և Ադրբեջանի այլ շրջաններում, կազմակերպում են զինված ջոկատներ[10]։ Այդ նույն քաղաքականությունն էին վարում դաշնակցականները և վրաց մենշևիկները։ Այդ օրերին մենշևիկյան «Борьба»-ն հաղորդեց, որ «շուտով բանակցություններ են սկսվելու կամավորական բանակի (Դենիկինի—Մ. Բ.) և մենշևիկյան կառավարության միջև»[11]։

Վրացական մենշևիկները դրանից շատ առաջ կապեր էին հաստատել Դենիկինի հետ, Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարում զինվորագրվել նրան։ 1918 թ. սեպտեմբերին տեղի էր ունեցել Վրաստանի մենշևիկյան կառավարության արտաքին գործերի մինիստր Գեգեչկորու և Դենիկինի հանդիպումը։ Այդ հանդիպման ժամանակ Գեգեչկորին մենշևիկյան կառավարության անունից Դենիկինին հավաստիացրեց, որ իրենք միևնույն նպատակն են հետապնդում, միայն տարբեր դիրքերից։ Այն հարցին, թե դա ինչպես

---

7 Նույն տեղում, 27.V.1919։

8 «Набат», 23. V. 1919.

9 «Заря», 27. V. 1919.

10 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ադրբեջանական մասնաճյուղի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ արխիվ), պատճենների ֆոնդ, գ. 202, թ. 134—135։

11 Մեջ է բերվում «Волна» -ից՝ 22—24.VI.1919։

պետք է հասկանալ, «սոցիալիստ» Գեգեչկորին պատասխանում է, որ Դենիկինը պայքարում է բոլշևիկներին տապալելու համար, որպեսզի վերականգնի երկրի նախկին սահմանները, իսկ մենշևիկյան կառավարությունը պայքարում է այդ նույն բոլշևիկներին տապալելու համար, բայց անկախ հանրապետությունների լոզունգով[12]։ «Բոլշևիկների նկատմամբ վերաբերմունքի հարցի առթիվ կարող եմ հայտարարել,— ասում է նա,— որ մեր սահմաններում պայքարը բոլշևիկների դեմ անխնա ու անողիջում է։ Մենք մեզ մոտ եղած բոլոր միջոցներով ճնշում ենք բոլշևիզմը... որը վտանգ է սպառնում մեր պետության ամբողջությանը և ես կարծում եմ, որ այդ ուղղությամբ մենք տվել ենք բազմաթիվ ապացույցներ»[13]։

Ելնելով այս և բազմաթիվ այլ փաստերից, «Заря» թերթը 1919 թ. մայիսին գրում էր, որ ուղղակի դաշինք գոյություն ունի Դենիկինի, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի բուրժուական կառավարությունների միջև[14]։

Կուսակցության երկրային կոմիտեն 1919 թ. հունիսին հրապարակած կոչում ուղղակի գրում էր, որ Անդրկովկասի բուրժուական կառավարությունները «Դենիկինի դեմ պայքարել չեն ցանկանում, այլ ձգտում են նրա հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատել, ինչ գնով լինի»[15]։

1919 թ. օգոստոսի 15-ին Թիֆլիսում դաշնակցական կառավարության ներկայացուցիչ, գեներալ Քիշմիշևը հանդիպում է ունենում դենիկինյան բանակի գեներալ Բարաթովի հետ, որն անդրկովկասյան կառավարություններից պահանջում էր «պայքարել բոլշևիկների դեմ... չպաշտպանել Մոսկվային»[16]։ Քիշմիշևը խնդրում է Դենիկինի ներկայացուցչից՝ իրենց տրամադրել «մեկ միլիոն փամփուշտ»[17], որը բավարարվում է։

1919 թ. նոյեմբերին «Жизнь национальностей» թերթը ընդգծում էր, որ դաշնակցական կառավարության և Դենիկինի միջև գոյություն ունի «ռազմա-քաղաքական դաշինք»[18]։

Մուսավաթական, մենշևիկյան և դաշնակցական կառավարությունները իրենց տիրապետության ողջ ժամանակաշրջանում գործում էին բացահայտ կեղծիքի ոգով, ձգտելով այդ կերպ շեղել աշխատավորների ուշադրությունը դասակարգային պայքարից, բաժանել նրանց այլազգի աշխատավորներից։ Մերկացնելով մուսավաթականների հակահեղափոխական ձգտումները, բոլշևիկյան «Беднота» թերթը 1919 թ. սեպտեմբերին գրում էր, որ նրանց «գլխավոր նպատակն է մահմեդական բանվորներին այլազգի աշխատավորներից բաժանելով՝ խափանել նրանց դասակարգային միասնությունը, որպեսզի հեշտ լինի պղտոր ջրում ձուկ որսալը։ Սակայն մահմեդական բանվորները հասկացան այդ խաբեության իմաստը և խուսափեցին մուսավաթի ծուղակից»[19]։

Այն օրերին, երբ Դենիկինի բանակը պատրաստվում էր ներխուժել Ան-

---

12 «Собрание документов и материалов по внешней политике Закавказья и Грузии», Тифлис, 1919, стр. 405.

13 Նույն տեղում։

14 «Заря», 27. V. 1919.

15 «Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении (документы)», Ереван, 1957, стр. 273.

16 Նույն տեղում, էջ 281։

17 Նույն տեղում։

18 «Жизнь национальностей», 23. XI. 1919.

19 «Беднота», 14. IX. 1919.

դրրկովկաս, մուսավաթական կառավարությունը չանում էր խարխլել աշխատավորների դասակարգային համերաշխությունը, բորբոքելով ազգային և կրոնական կրքեր։ Մուսավաթական թերթերը ճգնում էին ապացուցել, որ իբր հայերը և ռուսները մահմեդականների թշնամիներն են և Դենիկինի հետ միասին ուզում են վերջ տալ «անկախ Ադրբեջանի» գոյությանը։ Բոլշևիկյան «Рабочий» թերթը մերկացնելով այդ ահավոր փարիսեցիությունը, գրում էր. «Վերջին ժամանակները մուսավաթականները նոր եռանդով ագիտացիա են մղում մահմեդական բանվորության շրջանում, բորբոքելով նրանց ազգային կրքերը և գրգռելով նրանց ռուսների ու հայերի դեմ, փորձում են համոզել, որ իբր նրանք Դենիկինի կողմնակիցներն են»[20]։ Թերթը աշխատավորներին կոչ էր անում չհավատալ այդ հերյուրանքին և ավելի մեծ եռանդով ամրապնդել իրենց շարքերը, վճռաբար հանդես գալ Դենիկինի դեմ, որը բոլոր ազգերի աշխատավորների թշնամին է[21]։

Մուսավաթական կառավարությունը հակագենիկինյան շարժումը ջլատելու նպատակով Ադրբեջանից մասսայաբար արտաքսում էր բոլշևիկներին։ 1919 թ. օգոստոսի 25-ին պրեմիեր մինիստր Ուսուբբեկովը պառլամենտի նիստում պարծենկոտությամբ հայտարարեց, որ Բաքվից արդեն արտաքսվել են 1000 մարդ և, եթե անհրաժեշտ լինի, կարելի է 10 օրում Բաքուն մաքրել բոլշևիկներից[22]։

Անդրադառնալով բոլշևիկների հասցեին տարածվող զրպարտչական լուրերին, «Заря»-ն գրում էր, որ անկախ այն բանից, թե ինչ դիրք կգրավեն Դենիկինի և Կոլչակի դեմ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի կառավարությունները, մեզ համար պարզ է, որ մենք՝ աշխատավորներս, պետք է հանդես գանք այդ ցարական սատրապների դեմ, հակառակ դեպքում նրանց հաղթանակը կնշանակի սև ռեակցիայի թագավորության հաստատումը Անդրկովկասում և Ռուսաստանում։ Դենիկինի հաղթանակը կնշանակի բանվոր դասակարգի ֆիզիկական ոչնչացում։ Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի և բոլոր աշխատավորների առջև այժմ մի հիմնական խնդիր կա՝ զենքը ձեռքին կռվել Դենիկինի հորդաների դեմ։ Ինչ մնում է Բաքվի պրոլետարիատին, ապա նա առանց ազգի, սեռի և տարիքի առանձնահատկության կրծքով պաշտպանելու է երկիրը և հեղափոխության նվաճումները դենիկինյան ներխուժումից, նշանաբան ունենալով «հաղթել կամ մեռնել»[23]։ Այդ նպատակով բանվոր դասակարգը այսօրվանից պետք է կազմակերպվի, ստեղծի մարտական ջոկատներ, համախմբվելով կոմունիստական ինտերնացիոնալի կարմիր դրոշի շուրջը[24]։

1919 թ. մայիսի 27-ին «Набат» թերթը «Ադրբեջանը Դենիկինի դիմաց» առաջնորդողում գրում էր, որ Դենիկինի բանդաները գրավել են Դերբենտը, բախում են Բաքվի դռները, իսկ մուսավաթական կառավարության օրգան «Ադրբեջան»-ն այդ մասին ոչինչ չի գրում, կարծես առանձնապես ոչինչ չի եղել։ Թերթի կարծիքով այդ մահացու վտանգի մասին «Ադրբեջան»-ը չի գրում, որովհետև այն ոչնչով չի վնասում կապիտալիստներին և կալվածատերերին,

---

20 «Рабочий», 16. IX. 1919.

21 Նույն տեղում։

22 Մի արխիվ, պատճենների ֆոնդ, գ. 202, թ. 403։

23 «Заря», 27. V. 1919.

24 Նույն տեղում։

աղալարներին ու բեղերին։ Նրանք փայլուն կերպով ապրում էին Նիկոլաևյան ժանդարմների իշխանության ներքո, վատ չէին ապրում թուրքական օկուպանտների ժամանակ, վատ չեն ապրի նաև ցարական գեներալ Դենիկինի թևի տակ[25]։ Վնասը միայն աշխատավորներինն է, որոնք վատ են ապրել ցարի ժամանակ, անտանելի էին ապրում թուրքական օկուպանտների օրոք, վատ կլինի նաև Դենիկինի ժամանակ։ Թերթի կարծիքով՝ մուսավաթական կառավարությունը պատրաստ է ճնշելու համաժողովրդական շարժումը Դենիկինի դեմ և այդ հակահեղափոխական գեներալի համար ճանապարհ բացելու դեպի Բաքու[26]։ Հունիսի 3-ին նորից անդրադառնալով Դենիկինի դեմ պայքարի հարցերին, «Набат»-ը մերկացնում էր մուսավաթական կառավարության հակահեղափոխական գործունեությունը և աշխատավորներին կոչ անում պայքարել Դենիկինի դեմ և դրանով իսկ օգնել հերոսական կարմիր բանակին, որը մեն-մենակ կռվում է միջազգային իմպերիալիզմի միացյալ ուժերի դեմ։ «Դենիկինը սպառնում է Ադրբեջանի անկախությանը,— գրում էր թերթը,— իսկ մուսավաթական կառավարությունը պայմաններ է ստեղծում, որ Դենիկինի գործակալները զորահավաք կազմակերպեն Ադրբեջանի տարածքում, որոնց ուժերով արդեն մոբիլիզացվել են 500 մարդ... կառավարությունը դավաճանություն է կատարում»[27]։ Այնուհետև թերթը նշում էր, որ Բաքվի բազմազգ բանվորները պետք է ոտքի ելնեն չափ ու սահման չճանաչող հակահեղափոխականների դեմ։

Դենիկինյան բանակների դեմ ակտիվ պայքարի կոչ էր անում նաև երկրամասի գյուղացիությունը։ 1919 թ. հունիսի 17-ին Թովուզի շրջանի Շամշադինի տեղամասի գյուղացիների միտինգում նշվեց. «Մեզ հասած տվյալներով դենիկինյան սև ռեակցիան մոտենում է մեր սահմաններին, որին նպաստում են անգլիացիները։ Մեզ պարզ է, որ նրանք մեր բարին չեն ցանկանում։ Այդ նկատի ունենալով, մեր բազմամարդ միտինգը որոշեց չենթարկվել պրովակացիայի և ակտիվ ու վճռական պայքար սկսել նրանց դեմ, մինչև արյան վերջին կաթիլը... Մենք պահանջում ենք թշնամիների դեմ պայքարել միայն զենքով»[28]։

Անդրկովկասի աշխատավորների պայքարը Դենիկինի դեմ կոորդինացնելու նպատակով «Բաքվի բանվորական կոնֆերանսի» նախագահությունը 1919 թ. հունիսի 5-ին դիմեց Թիֆլիսի բանվորական սովետի գործկոմին՝ Անդրկովկասի բանվորա-գյուղացիական արտակարգ համագումար հրավիրելու առաջարկով։ Դիմումում մասնավորապես ասվում էր. «Ելնելով դենիկինյան վտանգից, անհրաժեշտ ենք համարում Անդրկովկասի պաշտպանության հարցը քննարկել սովետի արտակարգ համագումարում»[29]։ Սակայն վրաց մենշևիկները ձախողեցին համագումարի հրավիրումը։ 1919 թ. հունիսի 9-ին Անդրկովկասում անգլիական զորքերի հրամանատարը դիմեց մենշևիկյան կառավարությանը, խնդրելով օգնել կամավորական բանակի համար Կարսից Նովորոսիյսկ զենք և այլ ռազմական հանդերձանք տեղափոխելուն։ Մենշևիկյան կառավարության նախագահ Ժորդանիան պատասխա-

25 «Набат», 27. V. 1919.

26 Նույն տեղում։

27 Նույն տեղում, 3.VI.1919։

28 Ադրբեջանական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 895, ց. 1, գ. 228, թ. 208—209։

29 «Волна», 9. VI. 1919.

նեց, որ «վրացական կառավարությունը մտադիր չէ խանգարել այդ փոխադրումներին, սակայն խնդրում է կարգավորել իրենց փոխհարաբերությունները Դենիկինի հետ»[30]։ Ահա այսպիսին էր Ժորդանիայի կառավարության դիրքորոշումը Դենիկինի նկատմամբ, իսկ Վրաստանի աշխատավորները պահանջում էին միավորել ողջ Անդրկովկասի կենսունակ ուժերը՝ ընդդեմ Դենիկինի։ «Մենք՝ զինանոցի աշխատողներս, գտնում ենք, որ Դենիկինի բանդաների դեմ կարելի է հաջողությամբ կռվել միայն միացյալ ուժերով. այդ պատճառով պահանջում ենք միավորել ողջ Անդրկովկասի աշխատավորներին, աղատ գործելու հնարավորություն տալ բոլշևիկներին, բանտերից ազատել բոլոր հեղափոխականներին»[31]։

Անդրկովկասի բոլշևիկները Դենիկինի դեմ մղվող պայքարի այդ էտապում գանում էին, որ Անդրկովկասի սահմանների պաշտպանությունը Դենիկինյան բանդաներից բավական չէ։ Անհրաժեշտ է հարձակման անցնել նրանց դեմ և դրանով իսկ օգնել կարմիր բանակին, որը հերոսական պայքար էր մղում միջազգային իմպերիալիզմի միացյալ ուժերի դեմ։ Այժմ Անդրկովկասի աշխատավորների առաջնահերթ խնդիրը Դենիկինի դեմ մղվող պայքարն է, գրում էր «Набат» թերթը, բայց հակահեղափոխական կուսակցությունների և կառավարությունների մեջքով աշխատավորների ուժերը ջլատվում են։ Դա հետևանք է այն բանի, որ հակառակ աշխատավորների կամքի և կենսական շահերի, երկրամասը ոչ միայն անջատվեց Սովետական Ռուսաստանից, այլև մասնատվեց երեք մասերի։ Այդ քայլին հակահեղափոխականները դիմել են, որպեսզի ճնշեն հեղափոխական շարժումները երկրամասում և հաստատեն բուրժուա-կալվածատիրական կարգեր[32]։

Չնայած այն բանին, որ երկրամասի աշխատավորները միահամուռ պահանջում էին ակտիվ պայքար սկսել Դենիկինի դեմ, մուսավաթականները, մենշևիկները և դաշնակցականները օգնում էին Դենիկինին։ 1919 թ. հունիսի 8-ին Բաքվի Բալախանի-Զաբրատի-Ռամանի շրջանի բանվորները բողոքում են մուսավաթական կառավարության այդ քաղաքականության դեմ։ Նրանք գրում էին. «ամեն օր Բաքվի նավահանգիստներից արկեր, ռումբեր և այլ հանդերձանք է ուղարկվում Դենիկինին. դա դավաճանություն է ժողովրդի նկատմամբ. մենք բողոքում ենք դրա դեմ»[33]։

Անդրկովկասի աշխատավորները ի դեմս «Բաքվի բանվորական կոնֆերանսի» տեսնում էին Դենիկինի դեմ համաժողովրդական պայքարի կազմակերպչին և ողջունում էին նրա այդ գործունեությունը։ Բաթումիի արհմիությունների նախագահությունը նրան ուղղած իր ողջույնի հեռագրում գրում էր. «ողջունում ենք Ձեր հերոսական պայքարը, խոստանում ենք օգնություն Դենիկինի դեմ մղվող պայքարում»[34]։ Դենիկինի դեմ պայքարի կոչով հանդես են գալիս նաև Բաքվի երկաթուղային գլխավոր արհեստանոցների բանվորները[35], երիտասարդ բանվորների քաղաքային միտինգի մասնակիցները և բազմաթիվ ձեռնարկությունների ու կազմակերպությունների աշխատողները[36]։

30 «Правда Грузии», 14. XI. 1921.
31 «Волна», 14. VII. 1919.
32 «Набат», 11. VI. 1919.
33 «Заря», 12. VI. 1919.
34 «Набат», 11. VI. 1919.
35 «Волна», 9. VI. 1919.
36 «Молодой рабочий», 11. VI. 1919.

Անդրկովկասի հակահեղափոխական կառավարությունները տեսնելով, որ համաժողովրդական պայքարը Դենիկինի դեմ վտանգ է սպառնում նաև իրենց գոյությանը, հունիսի կեսերին ռազմական դրություն հայտարարեցին Ադրբեջանում և Վրաստանում, այն ուղղելով բանվորական կազմակերպությունների դեմ. արգելվեցին ժողովները, միտինգները, ցույցերը, բանվորական շարժման շատ աչքի ընկնող ղեկավարներ ձերբակալվեցին, ոմանք էլ արտաքսվեցին Ադրբեջանից և Վրաստանից։

«Набат» թերթն անմիջապես բացահայտեց հակահեղափոխության այդ քայլի իմաստը, ընդգծելով, որ «կառավարական հայտարարության մեջ ոչ մի միջոցառում չկա ուղղված Դենիկինի գործակալների դեմ, որոնք իրենց շատ հանգիստ ու ապահով են զգում մուսավաթական Ադրբեջանում, բայց կան բանվորական շարժման դեմ ուղղված հատուկ կետեր, որոնք արգելում են ժողովները, միտինգները, ցույցերը և այլն։ Բաքվի պրոլետարիատը վճռաբար բողոքում է այդ բացահայտ հակահեղափոխության դեմ»[37]։

Մուսավաթական կառավարության այդ բռնությունների դեմ իր բողոքի ձայնը բարձրացրեց Բաքվի պրոլետարիատը, հունիսի 13-ին դիմելով համաքաղաքային գործադուլի։ Այդ առթիվ «Набат» թերթը գրում էր, որ Բաքվի բազմազգ պրոլետարիատը մեկ մարդու նման դադարեցրեց աշխատանքը, բողոքելով հակահեղափոխության ոտնձգությունների դեմ։ Մուսավաթականները փորձում են խանգարել գործադուլը, համոզել մահմեդական բանվորներին, թե իբր բոլշևիկները դեմ են Ադրբեջանի անկախությանը։ Նրանք ուզում էին ստիպել մահմեդականներին, որ նրանք հավանություն տան մուսավաթական կառավարության քաղաքականությանը, սակայն հաջողություն չունեցան. Հունիսի 13-ի գործադուլը ցույց տվեց, գրում էր «Набат»-ը, որ բանվոր դասակարգը պաշտպանել չի կարող այն կառավարությանը, որը հակաժողովրդական քաղաքականություն է վարում[38]։

Բաքվի բազմազգ պրոլետարիատը հունիսի 13-ի ցույցի ժամանակ բացահայտ հայտարարեց, որ իր մահացու թշնամին ոչ միայն դենիկինյան բանդաներն ու նրանց դաշնակից իմպերիալիստներն են, որոնք օկուպացրել են Բաքուն և ողջ երկրամասը, այլև անդրկովկասյան կառավարությունները, որոնք պաշտպանում էին Դենիկինին և Անտանտին։

«Բաքվի բանվորական կոնֆերանսի» օրգան «Բաքվի ֆեխլե կոնֆերանսինին ախբարի» ադրբեջաներեն թերթը, քննադատելով մուսավաթական կառավարության հակաժողովրդական քաղաքականությունը, միաժամանակ քննադատում էր անգլիական օկուպանտներին, որոնք բացահայտ կերպով պաշտպանում էին բեկերի և խաների իշխանությունը։ Թերթը քննադատում է նաև վրացական մենշևիկներին, որոնք բարբաջում են սոցիալիզմի անունից, բայց բացահայտ ձևով ձախողեցին բանվորա-գյուղացիական արտակարգ համագումարի հրավիրումը[39]։

Դենիկինի դեմ մղվող համաժողովրդական պայքարի մեջ իր լուման ներդրեց նաև երկրամասի երիտասարդությունը[40]։ «Молодой рабочий» թերթը

---

37 «Набат», 15. VI. 1919.

38 Նույն տեղում։

39 «Борьба за победу Советской власти в Азербайджане (сборник документов)». Баку, 1967, стр. 186—188.

40 Այս պրոբլեմի մանրամասն լուսաբանումը տե՛ս Г. А. Аветисян. Комсомол За-

Հունիսի 23-ին «Դենիկինյան վտանգը և Բաքվի երիտասարդությունը» առաջնորդողում գրել է. «Երիտասարդ սովետական հանրապետությունը բազմաթիվ ճակատներում կռվում է ներքին և արտաքին թշնամիների դեմ... Այդ ճակատներից մեկը Դենիկինի դեմ է, որն ուզում է կործանել սովետական կարգերը Ռուսաստանում, նրան միացնելով և Անդրկովկասը։ Բոլորի համար պարզ է, որ ցարական գեներալը ցանկանում է վերականգնել նախկին կարգերը համայն Ռուսաստանում»[41]։ Այնուհետև թերթն ընդգծում էր, որ Անդրկովկասի հակահեղափոխական կառավարությունները ոչ միայն չեն պայքարում Դենիկինի դեմ, այլև չեն ցանկանում, որ ժողովուրդը պայքարի, որովհետև այն կարող է թուլացնել Դենիկինի պայքարը Սովետական Ռուսաստանի դեմ, որի տապալումը երազում են մենշևիկները, մուսավաթականները և դաշնակցականները։ Այդ պատճառով էլ երկրամասի բազմազգ աշխատավորներին դեռևս սպասում են համառ մարտեր ոչ միայն Դենիկինի և նրա հովանավոր անգլիացիների, այլև Անդրկովկասի հակահեղափոխական կառավարությունների դեմ[42]։

Ինչպես նշվեց, 1919 թ. հունիսի երկրորդ կեսին մենշևիկյան կառավարությունը ձախողեց Բաքվի պրոլետարիատի առաջարկը՝ կոլեկտիվ ճակատ ստեղծելու ընդդեմ Դենիկինի։ «Набат» թերթը հուլիսի 4-ին տպագրեց «Բաքվի բանվորական կոնֆերանսի» հետևյալ բողոքի հեռագիրը՝ ուղղված Թիֆլիսի սովետի նախագահությանը։ «Բաքվի բանվորները,— ասված է հեռագրում,— վրդովված են այն բանի համար, որ ձեր մեղքով խափանվեց բանվորա-գյուղացիական համագումարի հրավիրումը։ Այդ խայտառակ փաստը նոր դավաճանություն է վրացական մենշևիկների պարագլուխների կողմից։ Բաքվի բազմազգ պրոլետարիատը, հավատարիմ հեղափոխության պատգամներին, իր նզովքն է ուղղում բանվոր դասակարգի շահերի դավաճաններին և կրկին բարձրաձայն հայտարարում է, որ պատրաստ է վրաց բանվորների և գյուղացիների հետ ձեռք-ձեռքի տված պայքարելու գեներալ Դենիկինի սև հարյուրակային բանդաների և նրա անդրկովկասյան համախոհների դեմ»[43]։

Այդ օրերին Անդրկովկասի բազմաթիվ ձեռնարկություններում մենշևիկների դեմ բողոքի բազմաթիվ բանաձևեր ընդունվեցին, որոնք տպագրվեցին «Волна», «Набат», «Рабочий», «Молот», «Молодой рабочий» և այլ թերթերում։ «Բաքվի ֆեխլե կոնֆերանսին ախբարի» թերթն այդ օրերին գրում էր. «Մեր խնդիրն է, պայքարելով հակահեղափոխության դեմ, պաշտպանել մեր ազատությունները։ Բաքվի բանվոր դասակարգը և բոլոր աշխատավորները երբեք չեն խոնարհի իրենց կարմիր գրոշները դավաճանների առաջ։ Բաքվի բազմազգ բանվորները դիմում են Անդրկովկասի բոլոր աշխատավորներին՝ համախմբվել սոցիալիստական հեղափոխության կարմիր դրոշի շուրջը և վճռաբար հանդես գալ հակահեղափոխության դեմ»[44]։

Չնայած երկրամասի աշխատավորների մասսայական բողոքներին, մուսավաթական կառավարությունը, ինչպես նաև մենշևիկներն ու դաշնակցա-

---

кавказья в борьбе за победу и упрочение Советской власти (1917—1921), Ереван, 1964, стр. 181—201.

41 «Молодой рабочий», 6. VI. 1919.

42 Նույն տեղում։

43 «Набат», 4. VII. 1919.

44 «Борьба за победу советской власти в Азербайджане», стр. 216—217.

կանները գնալով մերձենում էին Դենիկինի հետ։ Այդ օրերին սովետական Մուղանի դեմ միասին կռվում էին դենիկինյան և մուսավաթական բանակները[45]։

Դաշնակցական կառավարությունը նույնպես ձգտում էր բարեկամության Դենիկինի հետ։ 1919 թ. օգոստոսի 15-ին Վրաստանում դաշնակցական կառավարության զինվորական ներկայացուցիչ գեներալ Քիշմիշևը հայտնում է դաշնակցական Հայաստանի ռազմական մինիստրին, որ ինքը հանդիպում է ունեցել Անդրկովկասում Դենիկինի հատուկ ներկայացուցիչ գեներալ Բարաթովի հետ, որն իրեն «ընդունել է հերթից դուրս և վերին աստիճանի սիրալիր»[46]։

1919 թ. հունիս-հուլիսին կուսակցության երկրային կոմիտեի Բաքվում լույս տեսած կոչում նշվում էր, որ ժողովրդի ճնշման տակ մուսավաթական և վրաց մենշևիկների կառավարությունները ոչինչ չասող մի քանի ամպագոռգոռ հայտարարություններ արեցին Դենիկինի հասցեին, բայց իրականում նրանք ձգտում են միայն ամեն գնով բարիդրացիական հարաբերություններ հաստատել Դենիկինի հետ[47]։ Այնուհետև կոչում ասվում էր, որ Անդրկովկասի կառավարությունները պատրաստ են կատարելու անգլիացիների և Դենիկինի բոլոր հակասովետական պահանջները, միայն թե մնան իշխանության գլուխ։ Այսպես, օրինակ, ինչպես նշվեց, Վրաստանի մենշևիկյան կառավարությունն անգլիական հրամանատարության պահանջով և Դենիկինին սիրաշահելու համար արգելեց Անդրկովկասի բանվորա-գյուղացիական համագումարի հրավիրումը, ուժեղացրեց հալածանքները բոլշևիկների դեմ։ Բացի այդ, նա փակում էր բոլշևիկյան թերթերը, ձերբակալում բոլշևիկյան գործիչներին, հույս ունենալով այդ կերպ գլխատել բոլշևիկյան շարժումը Վրաստանում։ «Վրացական մենշևիկյան կառավարությունը,— ասված է կուսակցության երկրային կոմիտեի կոչում,— այսուհետև հանդես է գալիս արդեն համակովկասյան ժանդարմի դերում՝ ընդդեմ սոցիալիստական հեղափոխության, ընդդեմ բանվորա-գյուղացիական շարժման»[48]։

1919 թ. աշնանը, երբ անգլիական զորքերը Բաքվից հեռացան, քաղաքական վիճակը Ադրբեջանում ծայրաստիճան սրվեց։ Կառավարությունը, բանվորական շարժման վերելքից վախենալով, ուզում էր բացահայտ դաշինք կնքել Դենիկինի հետ։ Սակայն այդ քաղաքականության դեմ պառլամենտում առարկողներ կային։ 1919 թ. դեկտեմբերին մուսավաթական կուսակցության համագումարում բանվորները քննադատեցին կառավարության քաղաքականությունը և հեռացան համագումարից։ Երկրամասում գնալով ուժեղանում էին հալածանքները բանվորական շարժման դեմ, սկսվել էին խուզարկությունները ու բանտարկությունները, փակվում էին բոլշևիկյան թերթերը։ Բոլշևիկների հասցեին տարածվում էին չարամիտ հերյուրանքներ։ 1919 թ. սեպտեմբերին կուսակցության երկրային կոմիտեն կոմունիստների նկատմամբ կիրառվող հալածանքների առթիվ հանդես եկավ հատուկ կոչով։ Այնտեղ մասնավորապես նշվում էր, որ մեր դասակարգային թշնամիները, ելնելով

---

45 «Молот», 5. VIII. 1919.

46 «Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении», стр. 281—282.

47 Նույն տեղում, էջ 273։

48 Նույն տեղում, էջ 268—269։

այն բանից, որ մենք չենք օգտվում խոսքի և մամուլի ազատությունից, մեր հասցեին շարամիտ լուրեր էին տարածում, աշխատելով այդ կերպ վարկաբեկել մեր կուսակցությանն աշխատավորների աչքում[49]։

«Թող լսվի իմանան մեր դասակարգային թշնամիները, որ մենք կազմակերպված պրոլետարիատի հետ միասին վճռական պայքար ենք մղելու հակահեղափոխության դեմ մինչև լիակատար հաղթանակ։ Կորչեն ժողովրդի բոլոր թշնամիները և դավաճանները։ Կորչի դենիկինյան հակահեղափոխությունը։ Կորչի բուրժուազիայի դիկտատուրան։ Կե՞ցցե բանվորա-գյուղացիական դիկտատուրան, կե՞ցցե սովետական իշխանությունը Կովկասում»[50]։

Դենիկինի դեմ Անդրկովկասի աշխատավորների պայքարի հետագա վերելքի կազմակերպման համար կարևոր նշանակություն ունեցավ Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատի դիմումը Ադրբեջանի, Դաղստանի և Վրաստանի աշխատավորներին, որտեղ ասված էր. «ընկ. բանվորներ և գյուղացիներ, ցարական գեներալ Դենիկինը դալիս է Կովկաս, որպեսզի հաստատի ցարիզմի լուծը։ Նա արդեն հայտարարել է, որ ձեր երկիրը Ռուսաստանի անբաժանելի մասն է։ Դենիկինը Անգլիայի դրածոն է, իսկ Անգլիան ցարական գեներալների օգնությամբ ուզում է տապալել սովետական կարգերը Ռուսաստանում և վերականգնել ցարական միապետությունը։ Ձեր կառավարություններն այդ բոլորը գիտեն և ուզում են այդ կերպ խանգարել սովետական կարգերի հաստատումը, որպեսզի հողը մնա կալվածատերերին, իսկ գործարանները՝ բուրժուաներին...

Սովետական Ռուսաստանը հույս ունի, որ Դաղստանի, Ադրբեջանի և Վրաստանի բանվորները և գյուղացիները ցարական գեներալ և անգլիական դահիճ Դենիկինին թույլ չեն տա կոխրտելու և ոչնչացնելու իրենց ազատությունը»[51]։

Երկրային կոմիտեի վերոհիշյալ կոչերին և ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողկոմատի դիմումին արձագանքեցին բոլշևիկյան բազմաթիվ թերթեր։ «Զախմետ Սադասի» ադրբեջաներեն թերթը գրում էր, որ ժողովուրդների անկախության բոլոր թշնամիները՝ կապիտալիստները, կալվածատերերը, բեգերն ու խաները, նրանց ծառա հակահեղափոխական կուսակցությունները, դաշնակցած նախկին ցարական գեներալների և միջազգային իմպերիալիստների հետ, ուզում են ոչնչացնել Ռուսաստանում պրոլետարիատի դիկտատուրան և իշխանությունը նորից հանձնել Նիկոլաևյան գեներալներ Կոլչակին ու Դենիկինին, նորից թափեն Ռուսաստանի ժողովուրդների արյունը, նրանց դարձնելով կալվածատերերի և կապիտալիստների ստրուկը[52]։

Թերթն այնուհետև, քննադատելով իմպերիալիստական տերություններին, ընդգծում էր, որ նրանք ժողովուրդների ազատության մասին խոսում են միայն և միայն նրանց ստրկացնելու համար։ Այն ժամանակ, երբ իմպերիալիստները Սևրում ժողովուրդների համար նոր շղթաներ էին կռում, բանվորա-գյուղացիական կարմիր Մոսկվայում Կոմինտերնը ի լուր աշխարհի հայտարարում է, որ իր գլխավոր նպատակը համարում է ճնշված ժողովուրդների ազատագրումը կապիտալի շղթաներից։ Թերթը դիմելով Արևելքի մահ-

---

49 «Борьба за победу Советской власти в Грузии», Тбилиси, 1968, стр. 294—296.

50 Նույն տեղում, էջ 296։

51 «Беднота», 4. IX. 1919.

52 «Борьба за победу Советской власти в Азербайджане», стр. 308.

մեղական աշխատավորներին, գրում էր. «դուք, արևելքի մահմեդական աշխատավորներ, որ դարեր շարունակ շահագործվում եք իմպերիալիստների կողմից, արթնացեք։ Ձեր ազատությունը, անկախությունը և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման գործը վտանգի տակ են, օգնեցեք այդ դիկտատուրայի ամրապնդմանը՝ ձեր ազատագրման գրավականին»[53]։

1919 թ. վերջերին կարմիր բանակի հուժկու հարվածների տակ դենիկինյան զորքերը խուճապահար փախչում էին դեպի հարավ։ Անդրկովկասյան հակահեղափոխական կառավարություններն աշխատում էին որքան հնարավոր է օգնել Դենիկինին, իսկ մյուս կողմից՝ բոլոր միջոցներով ճնշում էին երկրամասի բանվորական շարժումները։

Այդ օրերին կուսակցության երկրային կոմիտեն հատուկ կոչով դիմեց Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի բանվորներին, գյուղացիներին ու զինվորներին։ Կոչում ասված էր, որ Անդրկովկասի «դեմոկրատական» կառավարությունները հաջողությամբ մրցակցում են ցարական գեներալներ Դենիկինի, Վրանգելի և Պոկրովսկու հետ՝ իրենց երկրներում հեղափոխական շարժումները ճնշելու համար։ Նրանք արյունով հեղեղեցին ապստամբ Վրաստանը և հարյուրավոր ու հազարավոր գյուղացիների, զինվորների ու բանվորների բանտերում փթեցրին։ Նրանք վայրագ գազանությամբ սկսեցին մասսայաբար Դենիկինին հանձնել կոմունիստներին և այլ աշխատողների։ Երբեք ոչ մի տեղ շովինիստական քաղաքականությունն այնպիսի խայտառակ բարձրունքի չի հասել, ինչպես Անդրկովկասի «դեմոկրատական» հանրապետություններում։ «Հանուն հակահեղափոխության հաղթանակի նրանք պատրաստ են դաշինքի մեջ մտնել... միջազգային պրոլետարիատի և բանվոր դասակարգի հեղափոխության բոլոր թշնամիների հետ։ Դենիկինի կործանումը անդրկովկասյան բուրժուական կառավարությունների անկման սկիզբն է։ բանվորագյուղացիական իշխանության հաղթանակի գրավականը Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում, որովհետև ոչ թե Կովկասյան լեռնաշղթան, այլ հակահեղափոխական դենիկինյան պատնեշն է Կովկասի հեղափոխական ալիքները բաժանում Ռուսաստանի հեղափոխական օվկիանոսից։ Այդ պատճառով Ժորդանիայի, Ուսուբբեկովի և Խատիսովի ծախու կառավարություններն ամբողջ ուժով ջանում են Դենիկինին փրկել վերջնական անկումից։ Ընկեր բանվորներ, գյուղացիներ և զինվորներ, պատրաստվեցեք անհապաղ պատերազմի ցարական գեներալական հակահեղափոխականության դեմ։ Մեր բոլոր ուժերը, բոլոր միջոցները մենք պետք է գործադրենք Դենիկինի և նրա կամա ու ակամա բարեկամների դեմ։ ...Ով հաշտության ձեռք մեկնի Դենիկինին, նա անդրկովկասյան ժողովուրդների ինքնորոշման թշնամին է»[54]։

Որքան էլ Անտանտի կառավարությունները և Անդրկովկասի հակահեղափոխականները փորձեցին փրկել Դենիկինին կործանումից՝ այդ նրանց չհաջողվեց։ Կարմիր բանակի հուժկու հարվածների տակ ջախջախվեց դենիկինյան բանակը, իսկ ինքը՝ սև գեներալը ճողոպրեց արտասահման։ Կարմիր բանակը ընդհուպ մոտեցավ Անդրկովկասի սահմաններին, որը անսահման ուրա-

---

53 Նույն տեղում։

54 «Борьба за победу Советской власти в Грузии», стр. 514.

խություն պատճառեց երկրամասի աշխատավորներին։ Անդրկովկասը կանգնեց նոր իրադարձությունների շեմին։ Դա 1920 թ. սկիզբն էր։ 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանը դարձավ սովետական, նույն տարվա նոյեմբերի 29-ին սովետական կարգերը հաղթանակեցին Հայաստանում, իսկ 1921 թ. փետրվարի 25-ին՝ Վրաստանում։

БОЛЬШЕВИКИ ЗАКАВКАЗЬЯ В БОРЬБЕ ПРОТИВ ДЕНИКИНА (1919—1920 гг.)

МАРЛЕН БОРЬЯН

Резюме

Начиная с весны 1919 г. особую опасность для народов Закавказья представляла добровольческая армия Деникина, которая стремилась вторгнуться в Азербайджан, Грузию и Армению. Буржуазно-националистические правительства Азербайджана, Грузии и Армении всячески помогали Деникину в борьбе против Советской России. Только большевистские организации края выступили организатором борьбы народных масс против Деникина. В этом деле значительную помощь оказала им большевистская печать Закавказья 1919—1920 гг., внесшая весомый вклад в борьбу против Деникина.

После разгрома Деникина в Закавказье создались благоприятные условия для победы социалистической революции. В Азербайджане она победила 28 апреля 1920 г., в Армении—29 ноября 1920 г., а в Грузии—25 февраля 1921 г.